

27 Բայց կեսարացիք դառնացեալ սրտիւ
Շեշտ ի դուրս ելեալ անտի անհաճիւ
Թղթով առ Գրիգոր դիմեն աղերսիւ,
Որ Պատրիարզն էր շինին սուրբ ւ՛ ազնիւ:

28 Ձոր աղաչէին շատ պաղատանօք
Հաճել զՈվհաննու միտօրն պատգամօք,
Տալ ինքեանց զՍարգիս գովեալն համբաւօք
Առաջնորդ հովիւ արքունեաց թղթօք:

29 Որոյ նշմարեալ զայնց ըղձից բորբօք,
Որ կարէր զաղերս փոխել ի բողբօք,
Օրհնառաք թղթով լի բանիւ ամօք
Խոստանայր նոցա յանգել զայն ողբօք:

30 Եւ՞ ի նոյն պահու ձիգ յորդորանօք
Գիւրէր զՈվհաննէս Պատրիարդ տոմօք,
Շահիլ կեսարեանս սրտառուչ կամօք
Տալով այնց զՍարգիս ի հովիւ փառօք:

31 Յայնժամ Յօհաննէս որ սիրէր տենչօք
Ըզմեծն Գրիգոր պատուեալն յարդանօք,
Յորոյ շնորհ զիջեալ կամակար միտօք
Կատարէր նոցուն խնդիր իւր սարօք:

32 Այն է անուանէր զՍարգիս ընտրանօք
Հօտին կեսարու Հովիւ պերճ բաղմօք,
Հաստեալ յայնմ ըզնա կարեւոր կարեօք
Արքունի դրան հրովարտակօք:

1730

33 Ապա կացեալ նա անդր եւ եւս ամօք
Վասըն լինելոյն լի զբաղանօք,
Բայց յետոյ անտի մեծ հանդերձանօք
Երթայր ի Մատակ բազում ուղեկցօք: